ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՄԱՍԻՆ

Հոդված 20. Քարոզչությունը հանրաքվեի նախապատրաստվելիս

1. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ օրենքով չարգելված ձևերով և միջոցներով քարոզչություն կատարելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, հանրաքվե անցկացնելու նախաձեռնության հեղինակը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները (պատգամավորական խմբերը), կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները:

Քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

2. Պետությունը ապահովում է հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչության ազատ իրականացումը: Այն ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով քարոզչություն կատարողներին դահլիճներ և այլ շինություններ տրամադրելու միջոցով: Դրանք քարոզչություն կատարողներին տրամադրվում են հավասար հիմունքներով, անվճար՝ կենտրոնական հանձնաժողովի սահմանած կարգով:

2.1. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան 7 օր հետո մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը կենտրոնական հանձնաժողով են ներկայացնում այն դահլիճների և այլ շինությունների ցանկը, որոնք քարոզչություն կատարողներին տրամադրվում են անվճար: Այդ ցանկը տեղադրվում է կենտրոնական հանձնաժողովի համացանցային կայքում:

3. Քարոզչությունն սկսվում է հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ, իսկ պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու համար անցկացվող հանրաքվեի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

3.1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի յուրաքանչյուր խմբակցություն (պատգամավորական խումբ) իրավունք ունի՝

ա) անվճար օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 60 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 120 րոպե.

բ) վճարովի հիմունքներով օգտվելու հանրային հեռուստատեսության եթերաժամից ոչ ավելի, քան 120 րոպե, իսկ հանրային ռադիոյի եթերաժամից՝ ոչ ավելի, քան 180 րոպե՝ քարոզչության հիմնադրամի միջոցների հաշվին:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության եթերաժամերից կարող են օգտվել՝ սկսած քվեարկության օրվանից 30 օր առաջ:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցություններին (պատգամավորական խմբերին) վճարովի և անվճար եթերաժամը տրամադրվում է խմբակցության (պատգամավորական խմբի) ղեկավարի կամ քարտուղարի կողմից եթերաժամ տրամադրողին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

Անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը սահմանում է կենտրոնական հանձնաժողովը եթերաժամ տրամադրելու համար սահմանված ժամկետից առնվազն հինգ օր առաջ:

Զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող քարոզչության նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով համապետական ընտրությունների նախընտրական քարոզչության համար սահմանված կանոնները:

4. Քվեարկության օրը և նրա նախորդ օրը տեղամասային կենտրոնում չգտնվող պաստառները կարող են մնալ իրենց տեղերում:

5. Արգելվում է քարոզչություն կատարելը, ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածելը, քարոզչության նպատակով ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական ու մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելը՝

1) հանրային ծառայողներին, առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, *նախադպրոցական ուսումնական հաստատությունների* աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

2) պետական հիմնարկների կամ կազմակերպությունների, համայնքային հիմնարկների կամ կազմակերպությունների, կանոնադրական կապիտալում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների 20 և ավելի տոկոս մասնակցությամբ կազմակերպությունների աշխատակիցներին՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելիս կամ ի պաշտոնե հանդես գալիս.

3) դատավորներին, դատախազներին, քննչական մարմիններում, ոստիկանությունում, ազգային անվտանգության ծառայությունում, քրեակատարողական հիմնարկներում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, պրոբացիոն ծառայությունում, փրկարարական ծառայությունում ծառայողներին, զինծառայողներին.

4) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին.

5) բարեգործական և կրոնական կազմակերպություններին, միջազգային կազմակերպություններին.

6) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին, քաղաքացիություն չունեցող անձանց.

7) Մարդու իրավունքների պաշտպանին.

8) Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին.

9) Վերահսկիչ պալատի անդամներին.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին.

11) ինքնավար մարմինների անդամներին:~~5. Արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝~~

~~ա) պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնողներին, բացառությամբ քաղաքական և հայեցողական պաշտոններ զբաղեցնողների, ինչպես նաև ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին՝ իրենց լիազորություններն իրականացնելիս.~~

~~բ) սահմանադրական դատարանի անդամներին, դատավորներին, դատախազներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ծառայողներին, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, քրեակատարողական հիմնարկներում ծառայողներին, զինծառայողներին.~~

~~գ) հանրաքվեի հանձնաժողովի անդամներին.~~

~~դ) բարեգործական և կրոնական կազմակերպություններին.~~

~~ե) օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:~~

5.1. Ազգային ժողովի պատգամավորին չի արգելվում քարոզչություն կատարելը կամ քարոզչական նյութ տարածելը՝ բացառելով սույն հոդվածի 5-րդ մասում նշված վարչական ռեսուրսների օգտագործումը:

6. Քարոզչությունը կարող է կատարվել զանգվածային լրատվության միջոցներով, հրապարակային քարոզչական միջոցառումների ձևով (ժողովներ, հանդիպումներ, հրապարակային քննարկումներ, բանավեճեր, հավաքներ), տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով:

7. Քարոզչության իրավունք ունեցող անձինք կարող են օրենքով չարգելված ձևով հրապարակել և տարածել պաստառներ, թերթիկներ և քարոզչական այլ տպագիր նյութեր:

8. Քարոզչական պաստառները փակցնելու համար համայնքների ղեկավարները, հանրաքվե անցկացնելու մասին Հանրապետության Նախագահի հրամանագրի պաշտոնական հրապարակման օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, իսկ պետական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքը բացահայտելու համար անցկացվող հանրաքվեի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում, հատկացնում են հատուկ տեղեր: Համայնքի ղեկավարները հետևում են, որ հատուկ տեղերում փակցված պաստառները չպոկվեն: Այդ տեղերը պետք է հարմար լինեն քվեարկողների այցելության համար և ապահովեն հավասար մակերես «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության համար:

9. Հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ հասարակական կարծիքի սոցիոլոգիական հարցման արդյունքների հրապարակման ժամանակ զանգվածային լրատվության միջոցները պարտավոր են նշել հարցման ժամկետները, հարցվողների թիվը և ընտրանքի ձևը, հավաքման ձևը և վայրը, հարցի ճշգրիտ ձևակերպումը, հնարավոր սխալի վիճակագրական գնահատականը և պատվիրատուին:

Արգելվում է հանրաքվեի անցկացման օրը՝ մինչև ժամը 20.00-ն, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերություններին կամ հեռուստաընկերություններին հրապարակել հանրաքվեիմասնակիցների հարցման արդյունքներն այն մասին, թե հանրաքվեի դրված հարցին «ԱՅՈ» կամ «ՈՉ» են քվեարկել:

10. Քարոզչական տպագիր նյութերը պետք է տեղեկություններ պարունակեն պատվիրատուի, տպագրող կազմակերպության և տպաքանակի վերաբերյալ:

11. Արգելվում է՝

ա) անանուն քարոզչական նյութեր տարածելը: Անանուն կամ կեղծ քարոզչական նյութեր հայտնաբերելու դեպքում իրազեկ հանրաքվեի հանձնաժողովը դիմում է իրավասու մարմիններ՝ ապօրինի գործողությունները դադարեցնելու համար.

բ) քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը քարոզչություն կատարողներին արգելվում է քաղաքացիներին ցանկացած եղանակով անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ.

գ) քվեարկության և դրան նախորդող օրը տեղամասային կենտրոնում և դրան հարող տարածքում հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների վրա ազդեցություն գործել բանավոր կամ գրավոր ձևով, երաժշտության կամ պատկերավոր միջոցների օգնությամբ, ստորագրություններ հավաքելը, ինչպես նաև այլ եղանակներով հանրաքվեի դրված հարցի վերաբերյալ քարոզչություն կատարելը.

դ) մինչև քվեարկությունն ավարտվելը հրապարակել հանրաքվեին մասնակցած անձի քվեարկության արդյունքը.

ե) քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը:

12. Հանրաքվեի հանձնաժողովները հսկում են քարոզչության համար սահմանված կարգի պահպանումը: Դրա խախտման դեպքում հանձնաժողովները կարող են դիմել իրավասու մարմիններ՝ դրանք կանխելու, ինչպես նաև դատարան՝ քարոզչություն կատարելու իրավունք ունեցող անձին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար: Սույն հոդվածի 11-րդ մասի «ե» կետի դրույթների կատարումն ապահովում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը՝ անկախ հանրաքվեի հանձնաժողովի պահանջից: